ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2023թ. **N ------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ 1-ԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ Հ. 12 ՇԵՆՔԻ Հ. 3/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1 . Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան 1-ին զանգված հ.12 շենքի հ.3/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Նունե Սաշայի Զաքարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ 1-ԻՆ ԶԱՆԳՎԱԾ Հ. 12 ՇԵՆՔԻ Հ. 3/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 1-ին զանգվածի հ.12 շենքի հ.3/1՝ 80,43քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Նունե Սաշայի Զաքարյանին:

Արարատյան 1-ին զանգվածի հ.12 շենքի հ.3/1 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.01.2022 թվականի հ.27012022-01-0251 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Նունե Սաշայի Զաքարյանի ամուսինը տառապել է ծանր հիվանդությամբ: Վերջինիս խնամելու համար անհրաժեշտություն է առաջացել մեկուսացված առանձին պայմաններ, ուստի որևէ այլ տեղ համատեղության կարգով, ինչպես նաև վարձակալությամբ հնարավոր չի եղել բնակվել: Ամուսինները խնդրանքով դիմել են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Վ. Զատիկյանին: Վերջինս տեսնելով նրանց ծանր սոցիալական վիճակը, թույլատրել է բնակվել Արարատյան 1-ին զանգված հ. 12 շենք հ.3/1 հասցեում: Նշված հասցեն եղել է անբարեկարգ վիճակում՝ զրկված կոմունալ բոլոր ծառայություններից: Ամուսինները վերոնշյալ հասցեում փաստացի բնակվել են 1996թ.-ից: Ապրելու տարիներին վերջիններս բարեկարգել են բնակարանը, իրականացրել են կոմունալ ծառայությունների հետ կապված աշխատանքներ:

Նունե Միշայի Զաքարյանը 1996 թվականից առ այսօր բնակվում է Արարատյան 1-ին զանգված հ.12 շենք հ.3/1 հասցեում (հիմք՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Կողբ-1» համատիրության կառավարչի կողմից 16.11.2022 թվականին տրված հ. 376 տեղեկանքը, «Կողբ-1» համատիրության կառավարչի կողմից հաստատված 09.09.2021թ. հարևանների հայտարարությունը):

Միաժամանակ վարչական շրջանի աշխատակազմի կողմից հարցում է ուղարկվել «Կողբ-1» համատիրություն պարզելու, թե ում է հատկացված Արարատյան 1-ին զանգվածի հ. 12 շենքի հ.3/1 հասցեի բնակարանը: Ըստ համատիրության ներկայացրած պատասխանի՝ նշվել է, որ համատիրությունը չունի նման տեղեկատվություն, սակայն համատիրության ստեղծման պահից՝ 2012թ. քննարկվող բնակարանի տիրապետող բնակիչը Նունե Զաքարյանն է (հիմք՝ համատիրության 30.05.2023թ. թիվ 114 տեղեկանքը):

Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մալաթիա անձնագրային բաժանմունքի 23.02.2023թ. հ. 8/6-860 տեղեկանքի՝ Նունե

Սաշայի Զաքարյանը փաստացի հիմունքներով, շուրջ 16 տարի՝ 02.07.2007թ. հաշվառված է Արարատյան 1-ին զանգված 12 շենք հ.3/1 հասցեում:

ՀՀ Կադաստրի կոմիտեի 25.10.2022թ. տրված տեղեկանքի համաձայն Նունեն Զաքարյանի անվամբ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Շրջանային փող. 79 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը՝ 1/15/, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ տարածքում Ն.Զաքարյանի կողմից կնքված անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Ըստ ներկայացված տեղեկանքների Նունե Զաքարյանը կոմունալ և սպասարկման վճարների մասով որևէ պարտք չունի:

Բացի այդ, Արարատյան 1-ին զանգվածի 12 շենքի որոշ բնակարաններ ևս սեփականաշնորհվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով (30.05.2014թ. հ. 172-Ա որոշում, 17.03.2017թ. հ.689-Ա որոշում):

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ 1-ԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ Հ. 12 ՇԵՆՔԻ Հ. 3/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան 1-ին զանգվածի հ.12 շենքի հ.3/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ 1-ԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ Հ.12 ՇԵՆՔԻ Հ. 3/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող Արարատյան 1-ին զանգվածի հ.12 շենքի հ.3/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ